Կարգապահական գործ թիվ ԿԳ-19010

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2019 թվականի սեպտեմբերի 06-ի թիվ 206-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ ԿԳ/128-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ԱՐՍԵՆ ԴԱՎԹՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(ԱՆԴԱՄԱՎՃԱՐԻ ԳՈՐԾՈՎ)

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ նաև՝ Պալատ)** խորհուրդը **(այսուհետ նաև՝ Խորհուրդ)**, նիստը նախագահող՝ Կարապետ Աղաջանյանի, Խորհրդի անդամներ Սիմոն Բաբայանի, Մելանյա Առուստամյանի, Գայանե Դեմիրչյանի, Տիգրան Խուրշուդյանի, Հարություն Հարությունյանի և Նելլի Հարությունյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան Արսեն Դավթյանին (արտոնագիր՝ թիվ 722) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Զ Ե Տ՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

Համաձայն ՀՀ փաստաբանների պալատի գլխավոր հաշվապահի կողմից 06.03.2019թ. տրամադրված տեղեկանքի՝ փաստաբան Արսեն Դավթյանն ունի 60.000 (վաթսուն հազար) ՀՀ դրամ գումարի չափով՝ 2018 թվականի փետրվարից 2019թ. հունվար (ներառյալ) ամիսներն ընկած ժամանակահատվածի համար անդամավճարի մուծման չկատարման պարտավորություն:

2. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>**

11.03.2019թ. ՀՀ փաստաբանների պալատի նախագահի առաջին տեղակալի թիվ 60-Ա/ԿԳ-19010 որոշմամբ կարգապահական վարույթ է հարուցվել փաստաբան Արսեն Դավթյանի նկատմամբ՝ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասի, 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և Պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ՝ նաև Կանոնագիրք)** 2.9.1 ենթակետի խախտման հատկանիշներով:

Սույն կարգապահական գործը 15.03.2019թ. հանձնվել է Պալատի խորհրդին:

Խորհրդի նիստերը տեղի են ունեցել 11.06.2019 թ. ժամը 19:04-ին և 27.08.2019թ., ժամը՝ 19:26-ին և 06.09.2019թ., ժամը 18:27ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքիյան 7-2, 4-րդ հարկ 12 սենյակ):

3. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

Փաստաբան Արսեն Դավթյանը 25.03.2019 թվականին ներկայացրել է բացատրություն, որով հայտնել է, որ անդամավճար վճարելու պարտականությունը չկատարելու հիմքով իր նկատմամբ հարուցված կարգապահական վարույթն իր համար անակնկալ է եղել, քանի որ 2015 թվականին ներկայացրել է դիմում անդամավճարներ չմուծելու խնդրանքով, պատասխանը ձգձգվելու կապակցությամբ երկու անգամ դիմել է ֆինանսական տնօրենին, որի արդյունքում ստացել է չանհանգստանալու և պատասխան ստանալու հավաստումներ: Այնուհետև՝ 1 տարի անց 14.10.2016 թվականին խնդրել է գրավոր պատասխան, ինչի առնչությամբ ֆինանսական տնօրենն առաջարկել է գրել ևս մեկ դիմում ինչ-որ բարերարի աջակցությունից օգտվելու հետ կապված: Զրույցի ավարտին հասկացել է, որ այլևս անհանգստանալու առիթ չկա, հետագա անելիքների մասին կտեղեկացվի:

Փաստաբան Արսեն Դավթյանը և իր ներկայացուցիչ Գևորգ Դավթյանը 11.06.2019թ. և 27.08.2019 թվականների կարգապահական նիստերին ներկայացել են և ըստ էության վերահաստատել են նախկինում հայտնած դիրքորոշումները: Միաժամանակ հավելել են, որ արտոնություն տրամադրելու մասին դիմումի առնչությամբ պատասխան չստանալը և Պալատի աշխատակցի բանավոր հավաստիացումները հիմք է եղել ընդունելու, որ դիմումը բավարարվել է: Կարգապահական վարույթի հարուցման մասին տեղեկանալուց հետո ընդունել են ի գիտություն, որ արտոնություն տրամադրելու մասին փաստաբան Արսեն Դավթյանի դիմումը փաստորեն չի բավարարվել, ուստի այդ պահից սկսած կատարել է վճարումներ հետագա ամիսների համար:

06.09.2019 թվականի Խորհրդի նիստին փաստաբան Արսեն Դավթյանը պնդել է իր դիումում և բացատրություններում նշված հանգմանքները:

4. <u>Պալատի ֆինանսական տնօրենի պարզաբանումը.</u>

19.08.2019 թվականին Պալատի ֆինանսական տնօրենը ներկայացրել է տեղեկանք, որով նշել է, որ Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահի 11.03.2019թ. թիվ 60-Ա/ԿԳ-19010 որոշմամբ փաստաբան Արսեն Դավթյանի (արտոնագիր № 722) նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ **2018 թվականի փետրվարից 2019 թվականի հունվար (ներառյալ) ամիսների ընթացքում 60.000 (վաթսուն հազար)[1] ՀՀ դրամ գումարի չափով անդամավճարի մուծման չկատարված պարտավորություն ունենալու համար:**

Հարուցված կարգապահական վարույթի կապակցությամբ փաստաբան Արսեն Դավթյանը ՀՀ փաստաբանների պալատի նախագահին 25.03.2019թ. գրել է դիմում, որով հայտնել է, որ 2015 և 2016 թվականներին ֆինանսական դժվարություններից ելնելով՝ դիմում է գրել անդամավճարից ազատվելու մասին, ինչի հետ կապված իր նկատմամբ անդամավճարը չվճարելու հիմքով կարգապահական վարույթ հարուցելն անակնկալ է եղել:

[1] չհաշված նախկին՝ չմարված պարտավորությունը

Կարգապահական վարույթի հարուցման ժամանակահատվածում փաստաբան Արսեն Դավթյանի անդամավճարի ընդհանուր պարտքը կազմել է 200.000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ, սակայն հաշվի առնելով Արսեն Դավթյանի դիմումներն առ այն, որ վերջինս թոշակառու է, չունի աշխատանք և ընտանիքն ունի ֆինանսական խնդիրներ, ինչի հետևանքով հնարավորություն չունի վճարել անդամավճարը, ՀՀ փաստաբանների պալատն ընդառաջել է Արսեն Դավթյանին և իր կողմից փաստացի 2015 թվականի հոկտեմբերից անդամավճարը չվճարելու համար որևէ հետևանք չի առաջացրել:

Փաստաբան Արսեն Դավթյանի կողմից անդամավճարի ընդհանուր 200.000 ՀՀ դրամ գումարի չափով պարտք ունենալու պարագայում ՀՀ փաստաբանների պալատը **կարգապահական վարույթ է հարուցել միայն վարույթի հարուցմանը նախորդող մեկ տարվա պարտքի**, այսինքն՝ 60.000 ՀՀ դրամի համար (2018 թվականի փետրվարից 2019 թվականի հունվար (ներառյալ) ամիսների պարտք)՝ Արսեն Դավթյանի մնացած 140.000 ՀՀ դրամ գումարի պարտքը թողնելով անհետևանք:

Հատկանշական է նաև, որ փաստաբան Արսեն Դավթյանն իր անդամավճարի ընդհանուր պարտքի (200.000 ՀՀ դրամի) մասին մինչև իր նկատմամբ կարգապահական վարույթի հարուցումը՝ 2019 թվականի փետրվարի 12-ին ՀՀ փաստաբանների պալատի ցուցակում առկա, ինչպես նաև ՀՀ փաստաբանների պալատի կայքում փաստաբան Արսեն Դավթյանի անձնական էջում[2] նշված էլեկտրոնային փոստի հասցեով (davtyan1953@yandex.ru) ծանուցվել է, սակայն այդ ծանուցմանը որևէ կերպ չի արձագանքել:

06.09.2019 թվականի Խորրդի նիստին ներկայացել է Պալատի ֆինանսական տնօրենը Իրինա Փիլոյանը և ներկայացրել պարզաբանում իր կողմից կազմված 19.08.2018 թվականի տեղեկանքի վերաբերյալ: Նշել է, որ փաստաբան Արսեն Դավթյանի նշած բարերարի կողմից աջակցություն ստանալու 2016 թվականի շահառուների ցանկում (նկատի ունի ստացած շահառուների ցանկը) փաստաբան Արսեն Դավթյանը ներառված չի եղել և որ 140.000 ՀՀ դրամ գումարի պարտքի մասով վարույթ չի նախաձեռնվել՝ նախկինում նրա կողմից ներկայացված դիմումների հաշվառմամբ: Իսկ ինչ վերաբերում է հարուցված կարգապահական վարույթին, ապա՝ առկա պարտավորության ամբողջ ծավալի մասին ծանուցումն ուղարկվել է վարույթ հարուցելուց 1 ամիս առաջ, սակայն՝ փաստաբանը որևէ կերպ չի արձագանքել:

5. Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.

Պալատի խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա գրավոր փաստաթղթերը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1) փաստաբան Արսեն Դավթյանը փաստաբանական գործունեության արտոնագիր է ստացել 19.10.2007թ. (հաստատվում է Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրամադրված տեղեկանքով),
2) փաստաբան Արսեն Դավթյանն ունի 60.000 (վաթսուն հազար) ՀՀ դրամ գումարի չափով՝ 2018 թվականի փետրվարից 2019թ. հունվար (ներառյալ) ամիսներն ընկած ժամանակահատվածի համար անդամավճարի մուծման չկատարման

[2] http://advocates.am/advocates/view/261.html

պարտավորություն (հաստատվում է Պալատի գլխավոր հաշվապահի կողմից 06.03.2019թ. տրամադրված տեղեկանքով),

3) Փաստաբան Արսեն Դավթյանը ունի 215.000 (երկու հարյուր տասնհինգ հազար) ՀՀ դրամ գումարի չափով անդամավճարի մուծման չկատարման պարտավորություն (հաստատվում է Պալատի գլխավոր հաշվապահի կողմից 06.09.2019թ. Խորհրդին տրամադրված տեղեկանքով):
4) փաստաբան Արսեն Դավթյանը 23.11.2013 թվականին և 25.10.2016 թվականին ներկայացրել է Դիմումներ անդամավճար վճարելու պարտականությունից ազատելու խնդրանքով (հաստատվում է 23.11.2015 թվականի և 25.10.2016 թվականի դիմումներով),
5) փաստաբան Արսեն Դավթյանն անդամավճարի պարտքը մարել է մասնակի (հաստատվում է Պալատի գլխավոր հաշվապահի կողմից 06.09.2019թ. Խորհրդին տրամադրված տեղեկանքով):

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրամադրված տեղեկանքի համաձայն՝ Արսեն Դավթյանի (արտոնագիր՝ 722, ստացված՝ 19.10.2007թ.) նկատմամբ 2013-2019թթ. ընկած ժամանակահատվածում կարգապահական վարույթ չի հարուցվել (չհաշված սույն կարգապահական վարույթը):

7. <u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Հիմք ընդունելով Պալատի խորհրդի կողմից հաստատված փաստերը, դրանք հիմնավորող գործում առկա ապացույցները և քննարկվող իրավահարաբերությունները կարգավորող կանոնները՝ Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Արսեն Դավթյանի նկատմամբ կարգապահական գործի վարույթը ենթակա է կարճման հետևյալ պատճառաբանությամբ.

Փաստաբան Արսեն Դավթյանի վարքագիծը գնահատելու նպատակով Խորհուրդը Կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» **(այսուհետ նաև՝ Կարգ)** 5-րդ հոդվածի համաձայն նախ անհրաժեշտ է համարում պարզել, թե արդյո՞ք, Պատասխանողի արարքում առկա է մեղավորություն:

Հաստատված համարելով, որ փաստաբան Արսեն Դավթյանը 23.11.2015 թվականին և 25.10.2016 թվականին դիմումներ է ներկայացրել Պալատ անդամավճար վճարելու պարտականությունից ազատելու խնդրանքով, միաժամանակ Խորհուրդն արձանագրում է, որ կարգապահական վարույթի ընթացքում որևէ հավաստի տվյալ ձեռք չի բերվել առ այն, որ փաստաբան Արսեն Դավթյանի դիմումները մերժվել են և վերջինս պատշաճ ծանուցվել է այդ մասին:

Խորհուրդը գտնում է, որ նկարագրված պայմաններում Պատասխանողի մոտ մինչ հակառակի մասին ծանուցվելը ողջամտորեն կարող էր առկա լինել բարեխիղճ կանխավարկած առ այն, որ իր դիմումները բավարարվել են և ինքն օգտվում է անդամավճար չվճարելու արտոնությունից, ինչով պայմանավորված չի կատարել

անդամավճարի վճարումներ: Հատկանշական է, որ կարգապահական վարույթ հարուցելուց հետո վերջինս սկսել է կատարել վճարումներ:

Այլ կերպ ասած՝ տվյալ իրավիճակում, թեև փաստաբան Արսեն Դավթյանը թույլ է տվել կարգապահական խախտում, այդուհանդերձ այն իրականացրել է մեղքի բացակայության պայմաններում, որպիսի դեպքում բացակայում է կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքը:

Միևնույն ժամանակ Խորհուրդը հարկ է համարում ընդգծել, որ կարգապահական վարույթի կարճումը չի հանդիսանում պարտավորության դադարեցման հիմք և փաստաբանին չի ազատում անդամավճարի (215.000 (երկու հարյուր տասնհինգ հազար) ՀՀ դրամ գումար) պարտքը վճարելու պարտավորությունից:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7. հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության 16.26-րդ կետի, Կարգի 5-րդ մասի, 30-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներով, Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Արսեն Դավթյանի (արտոնագիր՝ թիվ 722) նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը կարճել:

2. Պալատի աշխատակազմի ղեկավարին հանձնարարել՝ սույն որոշման մասին իրազեկել փաստաբան Արսեն Դավթյանին:

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ որոշումը ստանալու օրվանից՝ մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում բողոքարկման համար սահմանված ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ Կարապետ Աղաջանյան

06 սեպտեմբերի 2019թ.
թիվ ԿԳ/128-Ա
ք. Երևան